

**ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ Նունե Մովսիսյանի ելույթը  
Հայաստանի Ամերիկյան Համալսարանում կայացած միջազգային  
գիտաժողովի ժամանակ**

Ողջունում եմ Հյաստանի Ամերիկյան համալսարանում կազմակերպված Հայաստանում աղջիկների և կանանց իրավունքների և հնարավորություններ ընդլայնում թեմայով միջազգային գիտաժողովի մասնակիցներին:

Գիտաժողովի նպատակն է ընդգծել կնոջ դերը հսարակայան մեջ՝ ընտանիքի կայացման, սերունդների դաստիարակման ու կրթման, բիզնեսի կառավարման, ձեռներեցության ոլորտներում:

Այսօր լսելով ԱՄՆ-ի Սեն Հոսե համալսարանի ռեկտոր Մարի Փափազյանին, IdeA և RWZ բարեգործական հիմնադրամների համահիմնադիր Վերոնիկա Զոնաբենդին, դիվանագետ Լիի Քարտերին, և ուրիշ կայացած կանանց, նորից գալիս ես այն համոզման, որ անհատի ապագան կախված է ընտանիքից, որտեղ մեծ է մոր դերը:

Կանայք նոր դինամիկա են հաղորդում հասարակության զարգացմանը և ունեն մեծ ներուժ ընտանիքից դուրս, հասարակական կյանքում ավելի ակտիվ լինելու իրենց նախաձեռնություններն ու բիզնես ծրագրերն իրականացնելու:

Որպես կրթության բնագավառում ներգրավված անձնավորություն ուզում եմ ասել, որ անհատի կրթությունն իրականացվում է ոչ միայն դպրոցում ու բուհում: Մարդ կարող է կրթվել ամեն օր, իսկ թե ինչպիսի անհատ կձևավորվի կախված է ընտանիքից: Կրթության համար կարևոր է ոչ միայն ուսուցիչների դերը, այլև ընտանիքի մոր դերակատարությունը:

Ես՝ որպես 2005թ Ամերիկյան համալսարանի շարունակական կրթության Կանանց ձեռներեցության ծրագրի շրջանավարտ իմ ստացած գիտելիքները

կիրառել եմ դպրոցի տնօրեն աշխատելիս և հիմա՝ ՀՀ Արագածոտնի փոխմարզպետի աշխատանքում:

Կինը միշտ գտնում է հնարավորություն հարցերին յուրովի մոտեցմամբ լուծում տալու համար:

Քաղաքացիկան հասարակություն կերթելիս պիտի առաջնորդվենք լավը տեսնելու, լավը մտածելու և լավը արարելու գաղափարներով:

« Որտեղ կա կամք, այնտեղ՝ ճնապարհ »:

22.04. 2017թ.